

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՂԱՊԱՐՈՒՄ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇԵԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ՏԱՐՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ամգլերեն լեզվի փաստական նյութի հիման վրա)

Ստորադասական կապակցության մեջ որոշային կախյալ նախադասությամբ բարդ նախադասությունները գործածության ամենամեծ հաճախականությունն ունեն և աչքի են ընկնում իրենց իմաստային բազմաճոխությամբ և կապակցման ձևերի հարստությամբ: Որոշային երկրորդական նախադասությունները հանդես են գալիս իբրև որոշյալի իմաստային ծավալիչներ՝ որոշյալի իմաստը ծավալվում է նրան հատուկ որոշակի իրադրությամբ:

Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցությունը իրականացվում է հարաբերյալի միջոցով, որ ավելի սերտ է դարձնում բաղադրիչների իմաստային և շարահյուսական կապը: Սա այն անդամն է, որի վերացարկված, չտարբերակված բովանդակությունը տարբերակվում ու որոշակիացնում է կախյալ նախադասությունը:

Որոշային կախյալ նախադասությունը գերադաս եզրի գոյականական անդամի հատկանիշները կարող է բնութագրել իմաստային բավականաչափ հարուստ երանգավորումներով և ի թիվս այլ իրակությունների, կապակցվել գերադասի հանդեպ որոշակի հաջորդականությամբ:

Կախյալ նախադասության գերադասի հանդեպ գրաված այս դիրքերը պայմանավորված են թե՛ իմաստային, թե՛ կառուցվածքաշարահյուսական գործոններով:

Որոշային ստորադաս նախադասությունը ունի համեմատաբար կայուն շարադասություն: Այն սովորաբար լինում է հետադաս և միջադաս: Եթե որոշյալը գերադաս բաղադրիչի վերջին անդամն է, ստորադաս եզրը հետադաս է: Եթե որոշյալը գերադաս եզրի սկզբում է տեղադրված կամ միջուկում, գերադասը ընդմիջվում է ստորադաս բաղադրիչով: Ընդմիջված որոշիչ երկրորդականը առանձնանում է իմաստաբանական և ձևակազմական օրինաչափություններով, որոնք պայմանավորվում են հիշյալ շարահյուսական երևույթների գոյը:

Իմաստաբանորեն որոշիչ միջադաս երկրորդականները դասվում են մասնատունակ որոշայինների շարքին: Կախված հարաբերյալի և ստորադասական նախադասության տրամաբանական հարակցության աստիճանից, որոշային ստորադասականները բաժանվում են երկու խմբի՝ անմասնատունակ (restrictive) և մասնատունակ (non-restrictive): Անմասնատունակ որոշիչները

այնքան սերտ են շաղկապված հարաբերյալի հետ, որ նախադասության ընդհանուր կաղապարից նրանց դուրս բերումը հանգեցնում է նախադասության ամբողջական մտքի խեղաթյուրման: Այսպես՝

And yet I imagine all these people are followers of one who never owned anything. (J.Galsworthy, The Forsyte Saga, Book 1, p.24):

Վերոհիշյալ օրինակում որոշչային կախյալը ոչ միայն բացահայտում է «one» հարաբերյալի իմաստը, այլ նաև ամբողջացնում է ողջ նախադասության ընդգրկումների սահմանը:

Սասնատունակ որոշիչ երկրորդականով նախադասության բաղադրիչների կապը առավել թույլ է արտահայտված և ուստի այս բնույթի շարահյուսական կառույցների բացակայությունը բոլորովին էլ չի խախտում տրամաբանական շարադրանքի հաջորդականությունը:

You're as different from me as I am from my Uncle James, who is the perfect specimen of a Forsyte. (J.Galsworthy, The Forsyte Saga, Book 1, p.120).

Որոշիչ երկրորդական նախադասությունները միջանկյալ նախադասության առավել ակնհայտ հատկություններ են ցուցաբերում, երբ դրված են լինում գերադաս բաղադրիչների ենթակայի և ստորոգյալի միջև: Նմանատիպ որոշչայինները հավելելով տեղեկություններ ենթակայի մասին միաժամանակ ամբողջացնում են նախադասության միտքը և իրենց հանկարծակի հայտնությանը կարծես թե խախտում, տրոհում են հոսուն շարադրանքը՝ շեշտակի ուշադրության արժանացնելով ներդրվող նոր տեղեկությանը, հաղորդմանը:

Այս դեպքում բարդ նախադասության բաղադրիչների հարաբերության բնույթը դրսևորվում է ծայնային որոշակի ելևէջավորումով: Բարդ նախադասության երկու բաղադրիչների սահմանագծում դիտվում է ծայնատոնի բարձրացում: Ընդ որում միջանկյալ որոշչայինով նախադասությունները արտաբերելիս ծայնային ելևէջների բարձրակետը ներկայացնում է հարաբերյալը, որը դրա հետ միասին տրամաբանական շեշտի կրողն է:

Գրավոր խոսքում բարդ նախադասության բաղադրիչներին ներհատուկ շարահյուսական հարաբերությունների բնույթը արտահայտվում է կետադրական տարրեր նշաններով: Գերադասի հետ որոշչային երկրորդականի կապակցության ձևերն են.

ա) ստորակետ

Cecil Jacobs, who lived at the far end of our street next door to the post office, walked a total of one mile per school day to avoid the Radley Place.

(H.Lee, "TO Kill a Mocking Bird", p.39)

բ) գծիկ

She had expected reward for her subterfuge planned for her lover's sake; she had expected it to break up the thick chilly cloud, and make the relations between them – which of late had been so puzzling, so tormenting – sunny and simple again as they had been before the winter.

(Y.Galsworthy, Forsyte Saga, B1, p.133)

գ) փակագիծ

In 1895 his first full-length novel, *The Time Machine* (which drew upon material he had contributed to the *Science Schools Journal*), was published.

(H.G.Wells, "Tono-Bungay", p.xiii)

Ընդ որում մեր դիտարկումները ցույց տվեցին, որ կետադրական նշանները զորու են արտահայտելու հարաբերյալի հետ ստորադասի սերտության աստիճանը: Սերտության բարձրագույն աստիճանը իրացվում է ստորակետով, միջակա աստիճանը՝ գծիկով և նվազագույն աստիճանը՝ փակագծով: Ավելին՝ փակագծերի դեպքում մերժության աստիճանը այնքան թույլ է, որ որոշչային կախյալը կարծես թե դադարում է որոշիչ լինելուց և վերածվում է բացատրություն տվող, մեկնաբանող ներդրի, որը որոշյալի երանգ է հաղորդում նախադասությանը իր լրացուցիչ տեղեկատվությամբ, բայց որի ներկայությունը նախադասության կայացման հարցում բոլորովին էլ պարտադիր չէ:

Կետադրական նշանները նույն տարբերակիչ գործառույթն են կատարում նաև, երբ մի միջանկյալի սահմաններում հայտնվում է մեկ այլ ուրիշ միջանկյալ:

Չնայած երկակի միջանկյալներով հարաբերակցված նախադասությունները մեծ թիվ չեն կազմում, սակայն, ըստ մեզ, մեծ արժեք են ներկայացնում որպես յուրովի լեզվական երևույթներ.

The stillness, enclosed in the far, inexorable roar of the town, was alive with the myriad passions, hopes, and loves of multitudes of struggling human atoms; for in spite of the disapproval of that great body of Forsytes, the Municipal Council – to whom Love had long been considered, next to the Sewage Question, the gravest danger to the community – a process was going on that night in the Park, and in a hundred other parks, without which the 1000 factories, churches, shops, taxes, and drains, of which they were custodians, were as arteries without blood, a man without a heart.

(Y.Galsworthy, Forsyte Saga, B1, p.253)

Նմանատիպ նախադասություններում գլխավորի սահմաններում ուրվագծվում են երկու միջանկյալներ, որոնք ունենալով միևնույն որոշչային բնույթը միաժամանակ տարբերվում են իրենց գործառույթով և հարաբերյալի հետ հարաբերակցվելու բնույթով: Եթե առաջին որոշչայինը մի լրացուցիչ հավելում է գլխավոր հարաբերյալին և միտված է սոսկ երանգավորելու ողջ նախադասությունը, ապա երկրորդ միջանկյալի մեջ ներդրված երկրորդայինի գործառույթը դուրս է գալիս տեղեկատվականի սահմաններից և ներկայանում որպես գլխավոր նախադասությամբ հաղորդվող նյութի տրամաբանական շարունակություն: Ուստի և վերջինիս կապը հարաբերյալի հետ ավելի զորեղ է քան առաջնային որոշչայինի հարաբերյալի կապը իր ստորադասի հետ: Բայց և միաժամանակ երկրորդ որոշչայինի կապը գլխավորի հետ թույլ է, քանի որ այն ունի միջնորդավորված բնույթ՝ երկրորդ որոշչայինը կապվում է գլխավորի հետ առաջին որոշչայինի հարաբերյալի միջոցով:

Երկակի միջանկյալներով բարդ որոշչային նախադասությունների բաղադրիչները ունեն կապակցման մույն բնույթը, ինչ մի միջանկյալով կաղապարները: Նրանք կարող են տրոհվել միմյանցից

ա) ստորակետով

But Swithin, hearing the name Irene, looked severely at Euphemia, who, it is true, never did look well in a dress, whatever she may have done on other occasions, and said: "Dressed like a lady, I've no doubt".

(Y.Galsworthy, Forsyte Saga, B1, p.183)

բ) գծիկով

Between the points of his stand-up collar, which – though it hurt him to move, he would on no account have had altered, the pale flesh of his underchin remained immovable.

(Y.Galsworthy, Forsyte Saga, B1, p.61)

գ) փակագծով

Francie (her mother, whom Roger had long since reduced to chronic dyspepsia, went to bed on such occasions) had been obliged to content herself with supplementing the piano by a young man who played the cornet, and she so arranged with palms that anyone who did not look into the heart of things might imagine there were several musicians secreted there.

(Y.Galsworthy, Forsyte Saga, B1, p.188)

Կետադրական այս նշանները նմանապես ազդարարում են բաղադրիչների իմաստային մերձեցման աստիճանի մասին:

Այսպիսով, փաստական նյութի վերլուծությունը հիմք է տալիս ասելու, որ միջանկյալ որոշչային նախադասությունների տարրորոշումը պետք է կատարել ըստ հետևյալ չափորոշիչների՝

1. իմաստաբանական
2. կառուցվածքային
3. կետադրական
4. հնչերանգային

Սրանցում առանցքայինը իմաստաբանականն է, քանի որ նրանով է պայմանավորված տրամաբանական ստորոգումը, որ առկա է գերադասի և ստորադասի հարաբերակցման կապում: Մյուս երեքը կոչված են լրացնելու առաջինին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ. Առաքելյան Հայերենի շարահյուսություն, Երևան, 1964.
2. Բ. Վերդյան, Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970.
3. Александрова О.В. Проблемы экспрессивного синтаксиса, М., 1984.
4. Валгина Н.С. Синтаксис современного русского языка, Москва, 1978.
5. Кубрякова Е.С. Человеческий фактор в языке. Язык и порождение речи, Москва, 1991.
6. Кибрик А.А. Фундаментальные направления современной американской лингвистики, Москва, 1997.
7. М.М. Philippova Syntax of the Subordinat Clause: Its Functional and Communicative Propertis, Moscow, 1998.